# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 245-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Մակարյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Մակարյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Մակարյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի Գետափնյա աջ փողոցի վերջնահատվածի 2594.0քմ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու համաձայնություն տալու մասին
   Զեկ. Ա.Մակարյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 4165.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը, «Գյուղատնտեսական նշանակության հողերից» 20000.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի և «Բնակավայրերի հողերից» 1313.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
   Զեկ. Ա.Մակարյան
6. Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տունը կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի անվամբ անվանակոչելու մասին
   Զեկ. Ա.Մակարյան

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 246-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Օրջոնիկիձե փողոցի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչները շենքերի բակերի փոսային նորոգման աշխատանքները կատարելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված շենքերի բակերը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել են ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր, դարձել գրեթե անանցանելի:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում փողոցի նշված հատվածում կատարելու ասֆալտի ջարդոնով փոսալցման ճանապարհի հարթեցման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձե փողոցի բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտի ջարդոնով փոսալցման և հարթեցման» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 670934 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կ...
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ...

ՀԱՄԱՅՆՔԻ ... Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 247-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մյասնիկյան փողոցի բնակիչները Մյասնիկյան փողոցի սկզբնամասից մինչև փողոցի թիվ 15 հասցեի տունն ընկած ճանապարհահատվածի նորոգման աշխատանքները կատարելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված ճանապարհահատվածը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր, դարձել գրեթե անանցանելի:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում փողոցի նշված հատվածում կատարելու ասֆալտի ջարդոնով փոսալցման ճանապարհի հարթեցման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասից մինչև փողոցի թիվ 15 հասցեի տունն ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտի ջարդոնով փոսալցման և հարթեցման» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 897052 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 248-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մյասնիկյան փողոցի բնակիչները Մյասնիկյան փողոցի թիվ 17 հասցեի տնից մինչև քաղաքային շուկա ընկած ճանապարհահատվածի նորոգման աշխատանքները կատարելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված ճանապարհահատվածը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր, դարձել զրեթե անանցանելի:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում փողոցի նշված հատվածում կատարելու ասֆալտի ջարդոնով փոսալցման ճանապարհի հարթեցման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 17 հասցեի տնից մինչև քաղաքային շուկա ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտի ջարդոնով փոսալցման և հարթեցման» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 928000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 249-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ԱՋ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՀԱՏՎԱԾԻ 2594.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքում ներկայումս իրականացվող Միջազգային դպրոցի կառուցման ծրագրին համապատասխան կատարված նախագծային աշխատանքների ընթացքում անհրաժեշտություն է առաջացել Գետափնյա աջ փողոցի վերջնահատվածի 2594.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը <<էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի>> կազմից փոխադրել համայնքի <<Բնակավայրերի հողերի>> կազմ, որպես հասարակական կառուցապատման հող, քանի որ վերջինս, ըստ նախագծի, հետագայում պետք է ծառայի միջազգային դպրոցի շենք-շինությունների սպասարկման նպատակով: Այն հանդիսանում է գործող փողոցի փակուղու վերջնահատվածը և որպես փողոց չի ծառայելու: Նշված փոփոխության առաջարկը համայնքի ղեկավարը ներկայացրել է համայնքի ավագանու քննարկմանը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Գետափնյա աջ փողոցի վերջնահատվածի 2594.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը <<էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի>> կազմից <<Բնակավայրերի հողերի>> կազմ փոխադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկին:
2. Առաջարկել Դիլիջանի համայնքի ղեկավարին՝ դիմել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին, վերոգրյալ հարցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական լիազորված մարմիններ ներկայացնելու նպատակով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 250-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 4165.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ» 20000.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀԱՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 1313.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. հոկտեմբերի 24-ի թիվ 522-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 4165.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը, «Գյուղատնտեսական նշանակության հողերից» 20000.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի, «Բնակավայրերի հողերից» 1313.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլատվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 4165.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը, «Գյուղատնտեսական նշանակության հողերից» 20000.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի, «Բնակավայրերի հողերից» 1313.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու 2012թ.

հոկտեմբերի 25-ի թիվ 250-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 48/ՔՀ-12/ | Մոլդովական 11/2 | 0654-0023 | 200.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | բջջային կապի կայանի կառուցման | 600,000 | չկան |
| 2 | Լոտ 49/ՔՀ-12/ | Տ.Պետրոսյան 4-րդ նրբ.6/1 | 0080-0013 | 3,225.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի կառուցապատման | 8,062,500 | չկան |
| 3 | Լոտ 50/ՔՀ-12/ | Թբիլիսյան խճուղի 129/8 | 0687-0004 | 240.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | ավտոտեխսպասարկման օբյեկտ | 600,000 | չկան |
| 4 | Լոտ 51/ՔՀ-12/ | Սարալանջի 13 | 053-353 | 500.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | բնակելի կառուցապատման | 1,250,000 | չկան |
| 5 | Լոտ 58 /ՔՀ-10/ կրկնամրցույթ | Սարալանջի 9-րդ նրբ. 4 | 053-185 | 723.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,807,500 | չկան |
| 6 | Լոտ 117/ՔՀ-10/ կրկնամրցույթ | Տ.Պետրոսյան 2-րդ նրբ. 25 | 040-240 | 590.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,475,000 | չկան |
| 7 | Լոտ 2/ԳՀ-12/ | Շտողանաջուր գետին հարակից հանդամաս | 0628-0009 | 4,500.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | վարելահող | 900,000 | չկան |
| 8 | Լոտ 3/ԳՀ-12/ | Շտողանաջուր գետին հարակից հանդամաս | 0628-0011 | 10,100.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | վարելահող | 2,020,000 | չկան |
| 9 | Լոտ 4/ԳՀ-12/ | Շտողանաջուր գետին հարակից հանդամաս | 0628-0010 | 5,400.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | վարելահող | 1,080,000 | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* [signature] *Ա. Մարտիրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2012թվականի N 251-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՈՒՆԸ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի պատվավոր քաղաքացի,ականավոր կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի կողմից Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տան հիմնադրման, ինչպես նաև քաղաքի մշակույթի զարգացման գործում ներդրած ավանդը հաշվի առնելով, համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տունը անվանել Էդվարդ Միրզոյանի անվամբ:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է .

Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տունը անվանակոչել ականավոր կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի անվամբ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ